ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## ԼՈՒՍԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ


ՀՀ Տավուշի մարզ ,Լուսաձորի համայնքապետարան

Emailusadzor.tavush@mta.gov.am


ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ 67–Ա

09 օգոստոսի 2018թ

ԼՈՒՍԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 11-034-0013-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել 11-034-0013-0007 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան համասեփականատեր Բաբկեն Իվանի Աբազյանը / ծնված 21.07.1953թ./մինչև 2001թ մարտի 15-ը փաստացի տիրապետող և <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված ան հատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա", քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված ,տնամերձ հողամասի վրա կառուց ված 262,48 քմ մեկհարկանի բնակելի տան , 29.72քմ ավտոտնակի , 31.95քմ անասնագոմի և 59.04քմ բ/պ –ի ճանաչման խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը ,որ 0,2395 հա տնամերձ հողամասի վրա կառուցված 262.48քմ բնակելի մեկհարկանի տունը ,29.72քմ ավտոտնակը , 31.95քմ անասնագոմը և 59.04 քմ բ/պ ը կառուցված չեն և չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում ,չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սեյսմիկ վտանգ և ղեկավարվելով << Իրավունք հաստատող փաստաթղթերը պահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >>ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ եմ

1. Լուսաձոր համայնքի 2փող.տուն 19 հասցեում /ծածկագիր 11-034-0013-0007/ գտնվող 0,2395 հա

Տնամերձ հողամասի վրա 1950թ. կառուցված 262.48 քմ մեկհարկանի բնակելի տան, 29.72քմ ավտոտնակի, 31.95քմ անասնագոմի և 59.04 քմ բ/պ-ի նկատմամբ ճանաչել Բաբկեն Իվանի Արզայանի /ծնված 19.01.2018թ/ սեփականության իրավունքը՝ հաշվի առնելով որ բնակելի տունը և օժանդակ շինությունները չեն գտնվում ՀՀ << հողային օրենսգրքի>> 60 րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

2.Լուսաձոր գյուղում 11-034-0013-0007 ծածկագրի տակ գտնվող բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը:Տավուշի մարզ, գ.Լուսաձոր 2փողոց տուն 19:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լուսաձոր համայնքի ղեկավար [illegible]